



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

7240

631.8

4-30

631.8

v 2051

(144)

4-309

№ 3.

ՀԱՐՆԵԼԱԿՊԸ ՊԱՐԱՐՏԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

2002

1892

2011.

"Անթի" լրագրի
համար Քաղաքացիական

630
9-ԱՐ ԿԱՐԵԼԱՀՈՂԸ

2001.

9/21 20.

631.8

4-30

ՊԱՐԱՐՏԱՑՆԵԼՈՒ

ՄԻՋՈՑՆԵՐ

Քարգանդ

ՅՈՎ. ԱՐԱՐՏՆԱՅ.

1003
10584



ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎՈՒ

ՏՊԱՐԱՆ ԳԷՈՐԳ Ս. ՍԱՆՈՅԵԱՆՅԻ

1892

16916

200

Дозволено Цензурою. Тифлисъ, 17 Юня 1892 г.



ՎԱՐՆԷԼԱԶՈՂԸ

ՊԱՐԱՐՏԱՅՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ



Тип. К. С. Саноянца, въ Александрополѣ, на
Бебутовской улицѣ, въ собст. домѣ.

* * *

Հին ժամանակներում, երբ մարդկանց թիւն
այժմեանից շատ պակաս էր, հողագործը հացհա-
տիկ ցանում էր այնտեղ, որտեղ ինքն էր կամե-
նում և երբ տեսնում էր, որ մի տեղում հացը
վատ է բուսնում, իսկոյն թողնում էր այդ տեղը և
ուրիշը մշակում: Իսկ երբ մարդկանց թիւը բազ-
մացաւ և վարելահողը չբաւականացրեց, այն ժա-
մանակ աշրէն անկաշիւ էր վաշել և ցանել այն-
տեղ, որտեղ կամենում էին, այլ նրանք ստիպուեցան
ամենայն ճշտութեամբ բաւականանալ փոքր տեղե-
րով, որոնք՝ ամեն տարի շարունակ ցանելուց՝ կոր-
ցնում էին իրենց պտղաբերութիւնը և այն աստի-
ճանի հասնում, որ այն տեղերում, որտեղից առաջ
լաւ հաց էր ստացւում, վարելահողը բոլորովին
փչանում, անպտղաբերութիւն էր առաջանում:

խակ դրանցից էլ—հացի պակասութիւն և սով: Արպէսզի այդ աղէտի առաջն առնուի, մարդիկ սկսեցին վարելահողը լաւ մշակել, իսկ երբ այդ էլ չօգնեց, մտածեցին նրան պարարտացնել:

Յայտնի է, որ ամեն մի բոյս, ինչպէս և կենդանիները, սնունդ է պահանջում, որը նա ստանում է պտղաբեր հողից և շրջապատող օդից: Իսկ երբ հողի մէջ պարունակուած սնունդը բոլորովին սպառուել է, այն ժամանակ բոյսը մնում է առանց սննդի և չի կարողանում աճել: Այդ դէպքում հողը կարելի է նմանեցնել կովին. քանի որ նրան կերակրում են, նա կաթ է տալիս, իսկ երբ մի առժամանակ չեն կերակրում, ո՛չ միայն նրանից կաթ չեն ստանում, այլ և զրկւում են կովից, որը սատակում է առանց կերակրի այնպէս, ինչպէս որ բոյսն առանց սննդի չորանում է: Վարելահողը լաւացնելու համար մի քանիսը բաւականանում են միմիայն նրանով, որ նրան հանդիստ են թողնում մի տարի և այս բաւական են համարում սակայն մոռանում են, որ առանց կարգին

պարարտացնելու, միմիայն հանդիստ թողնելը բաւական չէ: Այդ համարեա միևնոյն բանն է, եթէ մենք աշխատող ձիուն հանգստութիւն և անհրաժեշտ կերակուր տալու փոխարէն, տանք հանգստութիւն և մասնաւորապէս կերակուր—միթէ այն ժամանակ ձին կարող կ'լինի աշխատել իհարկէ—ո՛չ: Նոյնը և պատահում է ուժասպառ հողին. մի տարուայ ընթացքում նա կարողանում է շատ քիչ սնունդ հաւաքել և դա չի բաւականանալ լաւ ցանքսի համար: Այլ որ այս հասկանում է, նա անկարծիք քչով չի բաւականանալ, այլ ամենայն ջանքով կ'աշխատի, որ հողին հանգստութեան հետ միասին տայ և առատ սնունդ—կ'պարարտացնէ նրան: Շատերը այս բանը արդէն վաղուց հասկացել են և մեծ ջանքով աշխատում են պարարտացնել հողը և տալ նրան այն, ինչ բանի մէջ որ նա կարօտութիւն է զգում:

Օրինակի համար՝ Անդրիայում 150 տարի առաջ դաշտերը սաստիկ ուժասպառ էին եղած և անդլիացիները պտղաբերութիւնը վերականգնե-

ցրին, պարարտացնելով դաշտերի հողը ոսկորների փոշեով, որը նրանք գնում էին ոչ միայն իրենց տէրութեան մէջ, այլ և օտար երկրներում, ի թիւս որոց և Ռուսաստանում, որտեղից այդ նիւթը կրում էին միլիոնաւոր փթերով: Գերմանացիները և Ֆրանսիացիները նոյնպէս ոչնչեց չեն խորշում, ոչ մի աշխատանք չեն խնայում և այդ պատճառով էլ նրանք, ինչպէս և Անգլիացիները երեք, չորս անգամ աւելի օդուտ են ստանում, քան թէ մեր կողմերում: մի դեսեատին վարելահողից նրանք հաւաքում են այնքան հաց, որքան որ մենք հաւաքում ենք երեք, չորս դեսեատինից — ահագին զանազանութիւն: Համեմատելով մեր ցանքերը անգլիացիների ցանքերի հետ, աւելորդ չէ լինիր յիշել և այն, որ նրանք՝ միւլնոյն օդուտը ստանալու համար՝ մշակում և ցանում են միայն մի դեսեատին, այնինչ մենք — երեք, չորս դեսեատին:

Այսպէս՝ հողը պողոսբեր կարող է լինել այն դէպքերում, երբ իւր մէջ պարունակում է սննդա-

րար նիւթերի բաւականին բանակութիւն, որը կարեւոր է բոյսերի աճմանը: Ուրեմն՝ եթէ վարելահողը ուժասպառ է եղած՝ անպատճառ հարկաւոր է նրան պարարտացնել:

Սակայն ինչո՞վ կարելի է պարարտացնել վարելահողը: Նայենք մեր շուրջը և տեսնենք, թէ արդեօք չենք կարող մեզ մօտ այնպիսի նիւթեր գրտնել, որոնք կ'հարկաւորուին պարարտացնելու մէջ:

Գուրս է գալիս, որ ուր էլ որ նայենք, այդպիսի նիւթեր մեր աչքի առաջն են ընկած և եթէ աշխատենք, կարող ենք հեշտութեամբ ձեռք բերել:

Այդ նիւթերի թուին պատկանում են — մարդկանց, անասունների և թռչունների աղբը, ոսկորները, եղջերային մնացորդները, փչացած միսը, գաճը (ալյու), մոխիրը, կիրը, մեղձը (սաժ), սպանդանոցներում (ղասապխանայ) յետ ձգուած մնացորդները, ձուկը, կաղամբը, կաշուկտորները, մազը, փետուրները, փայտի տաշեղները, տերեւները, փշերը, աղբալից կանաչները և

ուրիշ բազմաթիւ նիւթեր: Նրանցից մի քանիսը, օրինակի համար՝ մարդկանց, անասունների և թռչունների աղբը, ոսկորների փոշին, առանձին կարելի է գործածել, իսկ միւսները — փետուրները, տաշեղը, մազը և այլն, գործ են ածւում խառնուրդի մէջ: Այստեղ ահա մենք այդ բոլոր նիւթերի մասին մանրամասն կ'իտօսենք և կ'բացատրենք, թէ ինչպէս պէտք է դրանցով պարարտացնել վարելահողը:

Անասունների աղբը կազմում է մեր կողմերում վարելահող պարարտացնելու ամենադիւրաւոր նիւթը. նրա այդ յատկութիւնը կախուած է անասունների գործածած կերակուրի տեսակից: Որքան որ նրանց կերակուրը իրենց մէջ շատ սննդաբար նիւթեր է պարունակում, այնքան լաւ աղբ է ստացւում: Նրա այդ յատկութիւնը կախուած է նոյնպէս և նրանց վերայ տարած խնամքից, որին շատերը տեղեակ չեն լինում. նրանք աղբը հաւաքում են ցած տեղերում, որտեղ ձեան և անձրևի ջուրը թրջելով նրան, իւր հետ տանում է

շատ սննդաբար նիւթեր, որից և կորչում է նրա արժանաւորութիւնը: Աղբի վերայ խնամք տանելու մի քանի միջոցներ կան: Նրանցից ամենահասարակն այս է. պէտք է չորացած աղբը դոմբրում անասունների տակ փռել. այսպիսով նա թէ՛ անասուններին ցելից է պաշտպանում և թէ՛ միևնոյն ժամանակ խառնւում է անասունների մէջի հետ, որով և աւելի օգտակար է դառնում:

Աղբը կարելի է պահել նրա համար յատկապէս շինուած փոսերի մէջ, որոնք անուանւում են աղբանոց: Աղբանոցները շինւում են գոմերի մօտ, մարդկանց բնակուած սենեակներից հեռու, որպէս զի օդը չ'ապականուի, և բարձր տեղերում՝ ջրի ճանապարհներից հեռու՝ որպէսզի ջուրը բարձրանալու ժամանակ չ'ընէ փոսերը: Այդ փոսերի յատակը և կողմերը ծածկւում են կամ կաւի շերտով և կամ տախտակներով, որպէսզի աղբի հիւթը չ'անցնի հողի մէջ: Կաւ աղբ ստանալու համար, հարկաւոր է նրան միշտ ջրի և բարբոսից ու կօլօբներից ազատ պահել, այսինքն՝

պէտք է միշտ խառնել, չորացած ժամանակ ջուր կամ աղբի հիւթ (մէզ) լցնել նրա վերայ և գաճի, կրի ու ածխի փոշի կամ մոխիր ցանել: Այլքը դաշտերը պէտք է տանել այն ժամանակ, երբ նրա տակի խոտը դեռ ևս թաքմ է և շուտ քանդուող: Մի դեսեատին հողին հարկաւոր է 900-ից մինչև 2500 փութ աղբ, նայելով յատկութեանը: Կաւտխառն՝ ծանր հողին հարկաւոր է շատ, իսկ թեթեւին — քիչ: Չափեց աւելին ոչ միայն օգուտ չի տալիս, այլ և վնասում է: Ինչտերում օղբի կոյտերը պէտք է իրարուց հաւասար հեռաւորութեան լինին և՛ որքան կարելի է շուտ պէտք է փռել և վարել, հակառակ դէպքում նա կ'չորանայ կամ կ'թրջուի անձրևից և շատ կարևոր նիւթեր կ'կորցնէ: Իսկ եթէ ինչ-ինչ պատճառներով չի կարելի շուտ վարել, այդ դէպքերում աւելի լաւ է աղբը փռած դրութեան մէջ պահել, քան թէ դիզած, որովհետև այն տեղերում, որտեղ կոյտերն են գտնուում, հողը չափազանց պարարտանում է և հայր այդպիսի տեղե-

րում լաւ է աճում. իսկ միւս տեղերը, որոնք պարարտացնում են չորացած աղբով, երբեմն տալիս են համարեա թէ չ'պարարտացրած հողի տուածին հաւասար բերք և՛ բացի դրանից՝ բոյսերի աճումը, հասակը անկանոն և տարբեր են լինում: Իսկ երբ աղբը դաշտ է բերւում վարելուց շատ վաղ, օրինակի համար՝ մի բանի ամիս առաջ, այն ժամանակ հարկաւոր է նրան մի մեծ սրածայր կոյտ անել, ամեն կողմից ծածկել նոյն դաշտի հողով և կոխտել: Այդ դէպքումն էլ աղբը չի կորցնիլ իւր պարարտացնող ոյժը:

Այլ էի հիւնը, այսինքն անասունների մէզը, իսկական պարարտացնող նիւթ է, որովհետև նրա մէջ սննդարար մասնիկների քանակութիւնը մեծ է և խառնելու ժամանակ իսկոյն ներգործում է: Թէ որքան բան կորցրած կ'լինինք, եթէ չ'աշխատինք հաւաքել և պահպանել այդ թանկագին պարարտացնող նիւթը, յայտնւում է նրանից, որ մէզը մի փութը՝ պարարտացնող ոյժի կողմից՝ կարող է հաւասարուել ը փութ աղբին: Օրինակի համար՝ լաւ

կովը օրէնք կարող է տալ մի փթից աւելի մէջ-
ուրեմն, տեսէ՛ք, թէ մի տարուայ ընթացքում
որքան կարելի է հաւաքել: Իհարկէ, ամեն օր
շարունակ մի-մի փութ մէջ չի կարելի հաւա-
քել, որովհետեւ անասունը միշտ տանը չի մնում:
բայց և հաւաքելով այնքան, որքան որ կարելի է
և նրա հետ գգուշութեամբ վարուելով, մենք
զարձեալ մեծ օգուտ կ'ստանանք: Մեզը աղբի հետ
խառն հաւաքելու համար, հարկաւոր է անասուն-
ների տակ յարգ կամ խոտ փռել: գրանց փոխարէն
կարելի է գործածել և չոր ցան, եղեգն (ղամիշ),
ծառների տերեւներ, փշեր, հող և այլն: Վարելի
է և յարգը հողի հետ խառն գործածել: Նրանք՝
ծծելով և իրենց մէջ պահելով մէջը՝ աւելի շատ
պարարտացնող նիւթեր են պարունակում, բան
թէ աղբը: Նոյնպէս և լաւ է դրանց վերայ գա-
ճի, կրի և ածխի փոշի ցանել, որով նրանց պա-
րարտացող ոյժը աւելի կ'զօրեղանայ: Արովհետեւ
աղբի հիւթը շատ արագ է ներգործում, այդ
պատճառով, աւելի լաւ է, նրան հաւաքելով մի

առանձին տեղ և նրա կիսի չափ ջուր աւելացնե-
լով վերան, ջրել նրանով վատ ծիլերը, որոնք այդ-
պիսի լուծուած դրութեամբ պարարտացնող մաս-
նիկներ ստանալով, կարճ միջոցում կ'զօրանան:

Մարտինի աշէլ կամ, ինչպէս ասում են չե-
նացիները գիշերուայ (կամ մարդկանց) ոսկին, պա-
րարտացնող ոյժի կողմից զերազանցում է անա-
սունների աղբից: Արդէն ասուած էր, որ աղբի
պարարտացնող ոյժը կախուած է գործածած կե-
րակուրներից, իսկ որովհետեւ մարդիկ լաւ են կե-
րակուում, բան թէ անասունները, այդ պատճա-
ռով էլ նրանց աղբը աւելի շատ սննդարար նիւ-
թեր է պարունակում իւր մէջ: Թէ որքան ահա-
գին օգուտ է տալիս մարդկանց աղբը հողագոր-
ծութեան մէջ, այդ կարելի է հասկանալ նրանից,
որ չենացին ըր մի օրէնք ունին, որով հրամայ-
ւում է նրանց հաւաքել այդ պարարտացնող
նիւթը: Բացի այդ գլխաւոր կէտից, չենացի-
ները, աշխատասէր ազգ լինելով, հաւաքում և
պարարտացնելու համար գործ են ածում այն

ամենը, ինչ որ՝ նրանց կարծիքով՝ պիտանի կարող է լինել: Հենց այդ պատճառով էլ նրանց երկրում պտղաբերութիւնը այն աստիճանի է հասնում, որ դժուար է անգամ հաւատալ: Սրինակի համար՝ ցորենի մի սոմարից (մեր չափով) մեր կողմերում ստացւում է 6, ամենաշատը 10 սոմար, այնինչ այնտեղ 50 և երբեմն աւելի—ահագին զանազանութիւն... Տեսնելով պտղաբերութեան այս զանազանութիւնը, անհրաժեշտ է հոգալ վարելահողի մասին այնպէս, ինչպէս որ չինացիներն են հոգում:

Մեր կողմերում այն աղբի վերայ, որն այնքան մեծ արժէք ունի չինացիների մօտ և որը տալիս է այնպիսի չըսուած օգուտներ, հարկաւոր ուշադրութիւն չի դարձւում, այլ թափւում է սրահներում կամ տների յետեր և այսպիսով անհետ կորչում, ապականելով օդը գարշահոտութեամբ: Նրան չ'գործածելու գլխաւոր պատճառը, ինչպէս շատերն են ասում, գարշահոտութիւնն է. սակայն այդ գարշահոտութիւնը հեշտութեամբ

կարելի է կարել, խառնելով նրան չոր ցանի, սև հողի, կրի, ածխի, կամ՝ ջրի մէջ լուծուած՝ երկաթի արջասպի (զաճ) հետ: Եւ երբ վերջին ժամանակներում հասկացան այդ պարարտացնող նիւթի տուած ահագին օգուտները, շատ տեղերում սկսեցին գործածել: Մի քանի հողագործներ կրում են քաղաքներից մարդկանց աղբը, պարարտացնում են դրանով իրենց արտերը և դրա շնորհիւ ստանում են մեծ օգուտներ: Միայն պէտք է աշխատել բոլոր տեղերն էլ հաւասար քանակութեամբ աղբով պարարտացնել. հակառակ դէպքում՝ չափից աւելի լցրած տեղերում բոյսերը կ'այրուին: Փոքր քանակութեամբ հաւաքուած մարդկանց աղբը աւելի լաւ է գործածել ուրիշ նիւթերի հետ խառն, որի մասին յետոյ կ'իսուենք: Խօսելով այդ աղբի օգտակարութեան մասին, չի կարելի և լռել մարդկանց մէջի մասին, որը նոյնպէս լաւ պարարտացնող նիւթերի շարքին է պատկանում: Նրան կարելի է հաւաքել կամ առանձին և գործածել մեծ

10384



քանակութեամբ ջրի հետ խառնած, հակառակ դէպքում, նա կարող է վնասել բոյսերին, և կամ աղբի հետ միասին՝ յատկապէս նրանց համար շինուած տեղերում: Այդ ժամանակ հարկաւոր է այդ տեղերի յատակները ծածկել սև հողով կամ չոր ցանով և աղբը դուրս հանելու ժամանակ պէտք է դուրս հանել պարարտացնող նիւթերի հետ միասին դրանց էլ, իսկ դրանց փոխարէնը նորը գործածել:

Կենդանիների սպորները, մանր ծեծուած դրութեամբ, իսկական և անփոխարինելի նիւթեր են վարելահող պարարտացնելու համար և այդ պատճառով ամեն մի բանիմաց և հասկացող անձ պէտք է թանգ գնահատէ նրանց: Թէ որքան օգուտ կարող է տալ դրանով պարարտացրած հողը, երևում է նրանից, որ մի փութ մանր ծեծուած սկորի պարարտացնող ոյժը հաւասար է 25—30 փութ աղբի ուժին և փորձը ցոյց է տուել, որ սև հողի հետ խառն սկորի փոշով պարարտացրած հողի վերայ ցանուած մանրահատ

ցորենից ստացուել է խոշորը, ծանրակշիւրը, որի շնորհիւ երկու անգամ աւելի օգուտ է ստացուել, բան թէ չպարարտացրած տեղից: Իսկ չէ, որ Անգլիացիները, որտեղ միայն կարելի է, գնում են սկորներ և հեռու երկրներից կրում միլիոնաւոր փութերով: Այս ամենը լսելով, լաւ չի՞ լինիլ արդեօք, որ մեզանից ամեն միւր՝ փորձի համար՝ դրանով պարարտացնէ իւր վարելահողի գոնէ մի փոքրիկ մասը:

Պարարտացնելու համար գործ են ածում երկանքով մանր ծեծուած սկորներ: Բացի դրանից սկորները կարելի է գործածել և չձեծուած դրութեամբ, այսպէս՝ արկղի, տաշտի կամ բարից փորուած փոսի մէջ դրւում են հանգած կրով ծածկուած սկորի կտորներ և վրան լցւում է կալաբարի կամ լաւ մոխրի հետ խառնած ջուր. այդ դրութեամբ սկորները փում են մի բանի օր. ջուրը պակասած ժամանակ հարկաւոր է նորը լնել և խառնել. 5 փութ սկորին հարկաւոր է մի փութ կիր, 10 վեդրա

ջուր և $1\frac{1}{2}$ փութ կալաքար կամ $2\frac{1}{2}$ —3 փութ լաւ մոխիր: 20 օրից յետոյ ստացուած խառնուրդը կարելի է գործածել պարարտացնելու համար, խառնելով նրա մէջ թեփ, կամ ցան. խառնելու ժամանակ պէտք է մի քանի անգամ հարել, աւելացնելով նրա վերայ, եթէ հարկաւոր է, հող կամ մի որևէ ուրիշ բան, մինչև որ ցանելու յարմար փոշի ստացուի: Մի ուրիշ տեսակ և կարելի է ոսկորը չ'ծեծուած դրութեամբ գործածել: Զօր, կաւոտ բարձր, տեղերում փորուած փոսի մէջ լցում են—շերտ-շերտ՝ մոխիր, ջարդուած ոսկորներ, նոյնպէս և կարելի է աւելացնել խոհանոցի զանազան աւելցուկներ, դրա վերայ դարձեալ մոխիր, ոսկորներ և այլն: Յետոյ այս բոլորի վերայ աղբի հիւթ է լցում և ծածկուում հողով: Մի ամսից յետոյ փոսը բացուում, խառնուրդի վերայ նորից աղբի հիւթ լցում և ծածկուում է: Աւելի լաւ կ'լինի, փոխանակ ամեն անգամ փոսը բանալու և ծածկելու, նրա մէջ տնկել մի քանի հատ փայտեր և դրանք ութն օրը

մի անգամ տեղերից հանելով, ծակերից աղբի հիւթ լցնել փոսի մէջ: Վեց ամսուայ ընթացքում, երբ ոսկորները կարողանում են բոլորովին լուծուել, հարկաւոր է 3—4 անգամ բանալ փոսը, աղբի հիւթ լցնել և նորից ծածկել: Այս կերպով պատրաստուած ոսկորները, ուրիշ շատ խառնուրդների հետ լուծուած լինելով, ամենամեղաբար պարարտացնող նիւթ են կազմում:

Գաշտերում՝ մի դիսետտին հողին 10—20 փութ (երբեմն աւելի) գած (ալչու, ալաբաստր) ցանելը լաւ հետևանքներ է տալիս: Գածը գործ է ածուում միմիայն պարարտ, սև հողով ծածկուած տեղերում, իսկ ցուրտ, աւազոտ, անպտղատու տեղերում գած ցանելը ոչ մի լաւ հետևանք չի տալիս: Գածը հարկաւոր է փոքրիկ ծիլերի վերայ ցանել գարնանը, եղանակի տաք ժամանակ, մանաւանդ առաւօտները վաղ, գիշերուայ ցօղեց յետոյ, որպէսզի նա կպչի բոյսերի տերևներին մանր փոշու նման: Գածը ցանելուց յետոյ եթէ անձրև կամ քամի լինի, նրա զօրութիւնը կ'պակա-

սի, իսկ եթէ չոր արեգակնային օրեր լինին, հետեւանքը շատ լաւ և օգտակար կ'լինի: Լաւ է նոյնպէս գաճը ուրիշ պարարտացնող նիւթերի հետ խառն գործածել:

Կիրը, որպէս պարարտացնող նիւթ, օգտակար է կաւոտ և ձահճային տեղերում, որտեղ նա օգնում է գործարանաւոր նիւթերի (ОРГАНИЧЕСКІЯ ВЕЩЕСТВА) լուծմանը: Աւելի լաւ է պարարտացնելու համար տարէնը 30 փթից աւելի կիր չ'գործածել և այն էլ ոչ ամեն տարի, հակառակ դէպքում նա շատ խորը կ'թաղուի հողի մէջ և կարևոր ներգործութիւնը չի անի: Կիրը պէտք է գործածել աշնանը: Որովհետև նա օգնում է գործարանաւոր նիւթերի լուծմանը, այդ պատճառով բոլորովին անօգուտ է նրան հեշտ լուծուող նիւթերի հետ գործածել, իսկ դժուար լուծուողների՝ օրինակի համար — թարմ աղբի հետ, անհրաժեշտ է: Այն տեղերում, որտեղ դաշտերը լաւ չեն մշակուում, կրով պարարտացնելը շատ օգտակար է:

Մոխիրը շատ օգտակար է կաւոտ, ծանր և խոնաւ հողերի համար: Մոխրի տուած օգուտը շատ տեղերում յայտնի է նրանով, որ ցանքանելուց (տափնելուց) յետոյ անպիտան խոտեր վառուած տեղերում հացը լաւ է աճում: ձահճային տեղերում մոխիր ցանելը անհրաժեշտ է այն պատճառով, որ այդպիսի տեղերում հողը հարուստ է թթւուաներով, որոնք շատ վատ են ներգործում բոյսերի աճմանը: Մոխիր, կամ աւելի լաւ է մոխրի և կրի խառնուրդ ցանելուց յետոյ, վնասակար թթւուաների ներգործութիւնը պակասում է: ձահճային տեղերում աւելի օգտակար է մոխրով պարարտացնել հողը, քան թէ աղբով, որովհետև աղբը այդպիսի հողի մէջ լուծուել չի կարող, ուրեմն բոյսերին սնունդ տալ էլ չի կարող: Մոխիրը, ինչպէս և կիրը, ոչնչացնում է վնասակար միջատների և կանաչների սերմերը: Լաւ է նոյնպէս մոխիրը ուրիշ նիւթերի հետ խառն գործածել: Տեսնելով, որ մոխրից այդպիսի օգուտներ կարելի է ստանալ, մեզ մնում է միայն անօգուտ

չփչացնել նրան, այլ հաւաքել և դրանով՝ ուրիշ բազմաթիւ պարարաացնող նիւթերի հետ՝ վերականգնեցնել մեր դաշտերի պողաբերութիւնը:

Եթէ վերև յիշուած նիւթերից քիչ քանակութեամբ կարելի է ձեռք բերել, հարկաւոր է նրանց իրար հետ խառն գործածել: Այդ խառնուրդի մէջ կարելի է աւելացնել համարեա ամեն տեսակ բաներ—կիր, մոխիր, մեղծ (սաժ), արիւն, միս, ձուկ, փետուրներ, մարդկանց, անասունների և թռչունների աղբ, աղբային խոտեր, տաշեղ, թեփ, չոր ցան, պատերի ծեփեր, մանր աղիւսներ և այլն, և այլն:

Այդ նիւթերի խառն դրութեամբ գործածութիւնը մանաւանդ ձեռնտու է աղբատ ընտանիքներում, որտեղ ամեն մի նիւթից առանձին քիչ է գտնուում: Շատ կարևոր է, որ վերև յիշուած նիւթերը, խառնուրդ պատրաստելիս, իրար վերայ չձգիրտուին, ինչպէս պատահի, այլ հաւասար կերպով լուծուելու համար՝ պէտք է ամեն ինչ կարգով անել: Խառնուրդի կոյտերը

պատրաստուում են ստուերի մէջ, բարձր տեղերում հետևեալ կարգով. սկզբում $\frac{1}{2}$ արշին բարձրութեամբ սև հողի կամ չոր ցանի շերտ է լցուում, յետոյ կրի և մոխրի շերտերը երկու-երկու վերջով հաստութեամբ, այդ ամենից յետոյ, դասաւորուում են շերտ-շերտ ուրիշ նիւթեր—ծեծուած ոսկորներ, մարդկանց աղբ, տերևներ, խոհանոցի մնացորդներ, թռչունների աղբ և այլն, և այս ամենը թրջւում է աղբի հիւթով, լուացքի և հասարակ ջրով. յետոյ դրա վերայ դարձեալ հողի մի շերտ և աղբի հիւթ կամ ջուր է լցուում: Այսպէս շարունակուում է, մինչև որ կոյտի մեծութիւնը երկու արշին բարձրութեան և հինգ կամ վեց արշին լայնութեան հասնի: Այս կոյտի երեսը պէտք է ծածկուած լինի հողով կամ չոր ցանով: Իհարկէ, դարսելու կարգը կարելի է փոփոխել, միայն թէ լաւ հետևանք կարելի լինի ստանալ: Առհասարակ խառնուրդը բոլորովին պատրաստ է լինում 5—6 ամիս յետոյ և այդ ժամանակուայ ընթացքում բաւականին մեծ հո-

գատարութիւն է հարկաւոր նրա վերայ. օրինակի համար՝ հարկաւոր է 2—3 անգամ բանալ շերտերը խառնել և, խոնաւութիւնը պահպանելու համար, նրա մէջ աղբի հիւթ կամ ջուր աւելացնել, որպէսզի խառնուրդի նիւթերը շուտ լուծուին: Իսկ այն դէպքում, երբ շերտերից միւսը սաստիկ ամրանում է, այնպէս որ հիւթի կամ ջրի անցնելուն արգելք է լինում, հարկաւոր է սրածայր փայտերով ծակծակել այդ շերտը, որպէսզի կարւոր հեղուկները անցնին կոյտի մէջ:

Խառնուրդի պատրաստութիւնը սկզբում շատ բարդ և անկարելի է թւում այն ժարդկանց համար, որոնք իրենց ասելով՝ առանց այն էլ շատ գործեր ունին: Սակայն դա լաւ չէ, միթէ շատ դժուար է մի տեղ որոշել և կրել այնտեղ տան և սրահի աղբերը. միևնոյն չէ՞ մոխիրը անօգուտ մի որևէ տեղ ետ լցրել, թէ մի որոշուած տեղ, որտեղից հարկաւոր դէպքում, կարելի կ'լինի արտերի հողը պարարտացնել

և դրանից լաւ օգուտ ստանալ... Այն դրա համար ժամանակ չպէտք է խնայել, աչքի առաջ ունենալով այն օգուտները, որոնք ստացւում են հողի բարեւաւորութիւնից:

Մեր բոլոր ասածից յայտնւում է, որ հողագործներից ամեն մինը կարող է վերականգնեցնել իւր արտերում հողի պտղաբերութիւնը, որովհետև, ինչպէս արդէն տեսանք, պարարտացնելու միջոցները շատ բազմաթիւ են: Իհարկէ չափազանց ուժաթափ եղած հողը չի կարելի մի տարուայ ընթացքում բարուոք դրութեան մէջ դնել: Սակայն, մի քանի տարի շարունակ նրա վերայ հոգս տանելուց յետոյ, միևնոյն դիսետտին հողը, որ այժմ 50—70 փութ է տալիս, կ'տայ 100—150 փութ և աւելի: Իրան բազմաթիւ օրինակներ կան, որոնց հետևելուց անտարակոյս չի փախչիլ ամեն մի ձեռներէց և բանիմաց անձն:

«Ազգային գրադարան»



NL0078936

7240

Յ. ԱՐԵՐԸՋՆԵՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- 1. ՄԵԾ ՔՈՅՐԸ 8 4.
- 2. ՈՐԲԵՐԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ 2 ”
- 3. ՎՍԲԵԼԱՀՈՂԸ ՊԱՐԱՐՏԱՑՆԵԼՈՒ
ՄԻՋՈՑՆԵՐ 5 ”

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

Դիմել՝
 Ալեքսանդրապոլ,
 Յ. Արարաջեանց:

2013

